Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.54/2-3
Մ-28

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՈՒԵԼԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

1. Կոչմար.
2. Քաղց.
3. Դաղաղներ.
4. Հիւանդանոցում.
5. Մութ է.

891.99
Մ-28

Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալէքսանդրապոլ
1906
(45)

09-16/III 28

891.99
Մ-28
Մ-28-3
Մ-28
14 FEB 2011

ՄԻՔԱՅԵԼ ՄԵՆԱՐԵԼԵՑՆ

Ա.Ա.

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

1001/2490

1. Կոշմար.
2. Քաղց.
3. Դաղաղներ.
4. Հիւանդանոցում.
5. Մութ է.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան ,,ՇԻՐԱԿ» Ալէքսանդրապոլ
1906

(45)

'24 JUN 2013
42039
3022
Բագուի Հայոց
Հոփսիմեան Դպրոց
Եկեղ.-ծխակ. (օրիորդաց)

ԿՈՇՄԱՐ

Թանձր ահռելի խաւար էր։ Մենակ էի։ Ինձնից առաջ գնացել էին ընկերներս...

Հեռւում աղօտ կերպով մի լոյս էր փայլփլում, որին որքան մօտենում էի, այնքան հեռու էր փախչում ինձնից։

Ես դիմում էի դէպի այդ լոյսը, որը մագնիսի նման դէպի իրան էր ձգում։

Ճնշող խաւարը քանի գնում թանձրանում էր, քամին սվվալով ազատ փչում, հեռւում լոյսը կախարդիչ կերպով փայլփլում, որքան թանձրանում էր խաւարը, նա այնքան, աւելի պայծառ էր երևում։

Ես կոյր մարդու նման հազիւ էի փոխում իւրաքանչիւր քայլս, խարխափում էի այդ անհուն խաւարի մէջ, աչքերս յոգնել էին շարունակ լարւած դրութիւնից և սկսել էին ցաւել. ինձ թւում էր թէ նրանք մեծացել են և իսկոյն դուրս կը

թուշեն իրանց տեղերից։ Ես ընկնում էի, բարձրանում, նորից ընկնում, ոտներիս տակ հողաթմբեր, երբեմն զէմ էի առնում քարերի, որոնք կարծես գիտմամբ թափել էին իմ ճանապարհին։

Ա՜խ... լոյս... լոյսի մի շող...

Իւրաքանչիւր բայլափոխում կանգ էի առնում, շոշափում, աջ ու ձախ էի գնում։ Հոգի թմբեր, քարեր—կարծես վերջ չկար։

Գերեզմաններ են...մտածեցի ես և ակամայ սարսուռ անցաւ մարմնովս ու սառը քրտինքը ծածկեց ճակատս։

Ինձ թւաց թէ գերեզմանները բացւում են և մեռելները գուրս են գալիս ու իրանց սոկրացած մատներով խեղդում են ինձ, ես ուզեցի ճչալ, բայց մի ինչ որ բան զէմ էր առել կոկորդիս, ոտներս չէին հնազանդւում ես հաղիւ էի շնչում։

Արձանի պէս բարացել էի կանգնած տեղումս։

Է՜յ.... հէ՜յ.... Է՜յ....

Յանկարծ լուեց մի ձայն, որին պատասխանեց արձագանքը և լռեց։

Ապա երեացին երկու իրար կից վառուող ճրագներ, որոնք գանդաղ զէպ ինձ էին գալիս։ Կրակները յամրաբայլ մօտենում էին. սիրտս բարձր ու անյանոն բաբախում էր. ես ուզում էի ետ

փախչել, բայց ամուր մխուած էի տեղումս, իսկ լոյսը մօտենում էր, գայլի զոյգ աչքերի նման։

Նա մօտենում էր. մօտեցաւ. տասը բայլ հաղիւ էր մնում. երևի տեսնում էր ինձ, որովհետև ուղիղ զէպ ինձ էր գալիս։ Ես թուլացած ընկայ հողաթմբի վրայ և սեղմւած սրտով սպասում էի նրան։

Մի բանի բայլի վրայ կանգ առաւ նա, ցածացրեց զոյգ ճրագները, խնարհեց գլուխը ու նայեց ինձ։—

—Ո՞վ ես դու։—

Ես ոչինչ չկարողացայ պատասխանել, սարսափից փակեցի աչքերս։

—Ո՞վ ես դու։ Ո՞ւր ես գնում։ Վախենալով բայց արի աչքերս նա մօտեցել ու անշարժ կանգնել էր ճիշտ մօտս։ Մի ծերունի էր վշտից ընկճւած։

Սպիտակ շապիկը, որը ծածկում էր նրա վրայի մարմինը, իջնում էր մինչև սրունքները. ձիւն էր միրուքը, մազերը անփոյթ թափթփւած ու աչքերի մէջ մի վայրի կրակ, որ սարսափ էր ազդում։ Ձեռքին մի գանգ ունէր բռնած, որի աչքի խոռոչներից մի զոյգ կայծ էր կայծկլտում աստղերի նման։

—Ո՞ւր ես գնում.—հարցրեց նորից լուրջ։

Ես լուռ մատով ցույց տի հեռում երևացող լոյսը։

—Չես հասնի դու նրան։ Ինչիկ է պէտք այդ լոյսը։

—Տես, ինչ խաւար է շուրջս։

Ես խամրում եմ առանց լոյսի, խաւարը խեղդում է։ Մենք բոլոր ընկերներով լաչին սատիկ էինք կարօտել .. Նրանք ինձնից առաջ գնացին և ես մենակ եմ մնացել։ Նրանք ասում էին, որ այնտեղ է երջանկութիւնը։ Մինթ դու չրտեսար նրանց..

—Տեսայ։

—Ո՞ր կողմն էին գնում։

—Ուղիղ։

—Ով ես դու։

—Ե՞ս. չգիտեմ։

—Ինչ տարօրինակ լապտեր է ձեռքիդ։

—Մի գանգ է։

Բայց դա է լուսաւորում քս ճանապարհը։

—Այո, գանգ է. աղջկաս գանգը. սա էլ էր ուզում գնայ հասնի այն լոյսին...

—Եւ հասաւ։

—Ո՛չ շատերը գնացին, բայց դեռ ոչ ոք չհասաւ։

—Բայց ես կը հասնեմ. դու դուրս բեր ինձ մի-

այն այս գերեզմաններից, լուսաւորիր ճանապարհս և ես կը հասնեմ....

—Ցաւը ձեռքդ։

Ես վարանում էի, բայց նա ուժով բռնեց ձեռքս իր սոկրացած մատներով։

—Գնանք։

Ու առաջ շարժուեցինք ձեռք ձեռքի։

Անցնում էինք գերեզմաններ և գերեզմաններ. իսկ լապտերը միապաղաղ լուսով լուսաւորում էր մեր ուղին։

—Այս ինչ է խշրտում մեր ոտների տակ։

—Կմախքներ։

—Կմախք...։ Զուտով դուրս կը գանք այդ կըմախքների միջից։

—Ամբողջ ճանապարհը սփռուած է մարդկային կմախքներով։

—Ամբողջ ճանապարհը ..

—Այո. այդ լոյսի զոհերն են դրանք. հին զոհերը։

—Հին. իսկ ուր են իմ ընկերները։

—Կանգնիր.—հրամայեց ծերուկի ձայնը։

Ես կանգ առայ վայրկեանաբար։

Առաջս բացուած էր մի անյատակ վիհ...

Նա ցած ուղղեց իր լապտերի աչքերը։

—Նայիր... Ի՞նչ ես տեսնում։

Ես սարսափեց ետ քաշուեցի։

—Նայի՛ր, ի՞նչ ես տեսնում,—հրամայեց նրա անողոք ձայնը։

—Դիակներ. միմեանց վրայ թափուած դիակներ։ Եւ իմ ընկերներս, ա՜, նրանք շարժւում են դեռ։

—Այո՛, դիակներ նրանց, որոնք ընկան լոյսը տանող ճանապարհին։ Իմ աչքիկս էլ է այնտեղ։

Որովհետեւ պէտք է լցնել այս վիհը։

Նա կը լցւի, և այն ժամանակ միայն կռւող-ների ու ընկնողների այդ դիակների վրայով նորերը կանցնեն անդունդն ու կհասնեն լոյսին։ Լսում ես, պէտք է լցնել այդ վիհը, պէտք է լցնել, որ հետեւից եկողները անցնեն ազատ..

Դէ՛, ինչ ես կանգնել. գնա՛, գնա՛ առաջ, որ նա լցւի։

Միայն շո՛ւտ. տես, արդէն գալիս են ուրիշ-ներն էլ. գալիս են կէնդ-կէնդ ու խմբերով. շո՜ւտ, շո՜ւտ...

Եւ ինձ հրեց։ Ես գայթեցի, սահեցայ ցած, ընկայ անյատակ անդունդն ու գլորւում էի դէ-պի ցած թաւալ-թաւալ ու պտոյտներ գործելով։ Սարսափից սառեց սիրտս։

Ու զարթեցի։ Կոշմար էր. ճնշո՜ղ, ծանր կոշմար։

Ք Ա Ղ Ց

ՊԱՏԿԵՐ

Բոլորը յանկարծ քաղց զգացին...

Դիակները դեռ թափթփուած էին փողոցնե-րում, կիսայրուած տներից դեռ ծուխ էր բար-ձրանում, արիւնը չէր ցամաքել, սարսափը դեռ բոլորովին անցած չէր... Բայց բոլորը քաղց զգա-ցին։ Երրորդ օրն է, որ նրանք փակուած են տներում. ամեն ինչ վերջացել է։ Վախ, վիշտ, տանջանք—բոլորին տեղի է տալիս քաղցը։ Ամեն ինչ մոռացած՝ միմիայն մի բան են զգում—քաղց։

Սոսկալի, տանջող քաղց։

Քաղաքի խուլ փողոցում, որտեղ չէին հաս-նում հաշտութեան ցնծալի աղաղակները, միայակ տան սենեակներից մէկում քաղցից թուլացած թափթփւել էին եօթ հոգի։

Քսանեօթ տարեկանի մօտ մի կին՝ չորացած ստինքը դրել էր երեխայի բերանը, որ ձայնը

կարի, բայց երեխան չյագեցնելով քաղցը՝ աւելի էր ճչում։ Մի անկիւնում կուչ էին եկել՝ երեքից մինչև տասնմէկ տարեկան չորս երեխաներ և թոյլ ձայնով «հա՜ց» էին կանչում։ Բոլորի դէմքին էլ տանջող ցաւ էր նկատւում, կարծես նեղանում էին ձայն հանել, շարժւել տեղներից։ Տախտի վրայ աչքերը մի կէտի յառած՝ նստել էր նրանց հայրը։ Բոլորն էլ քաղցած էին։ Տանը մի փշրանք էլ չկար։

—Հա՜ց... հա՜ց..., սոված ենք.—միաձայն կրկնեցին երեխաները... Հայրը լուռ՝ մօտեցաւ դռանը, վախվխելով բաց արաւ, դուրս հանեց գլուխը ու էլի իսկոյն փակեց դուռը։ Ինչ որ տարօրինակ ձայներ լսեց և չհասկացաւ, թէ ինչ ձայներ են։ Բաց արաւ պատուհանը, մի քանի վայրկեան լսողութիւնը լարած՝ ականջ դրեց... Հեռւից լսւում էին ինչ որ երաժշտութեան ձայներ, աղաղակներ... Հրացանի ձայներ չէին։

—Սա ինչ բան է,—զարմացած մրմնջաց նա քթի տակ, մօտենալով դռանը։ Այժմ աւելի վստահ բաց արաւ, դուրս հանեց գլուխը։

—Ի՞նչ ես վախենում, դո՛ւրս եկ, դուրս, հաշտութիւն է։ Չհասկացաւ մօտից շտապ անցնող մարդու խօսքերը։

—Հաշտութիւն, ինչ հաշտութիւն,—մտմտաց նա

և էլի փակեց դուռը։

Երեխաների նւագը չէր կտրւում. քանի գնում՝ աւելի սրտամաշ էր դառնում։

—Հա՜ց, մի կտոր հա՜ց. սիրտս քաշւում է, մրմնջաց կինը նւաղող ձայնով։

—Դուռը փակէք, ես իսկոյն կը գամ.—ասաց հայրը և դուրս գնաց։

Ոչ որ չշարժւեց տեղից։

Արագ, համարեա վազելով գնում էր. փողոցներում ոչ որ չէր երեւում. մի քանի տեղ նրա աչքին ընկան դիակներ. արիւն, այրւած, տներ։

Անտարբեր, առանց ուշք դարձնելու այդ բոլորի վրայ, առաջ գնաց։

Յիսուն քայլ հազիւ էր արել իր բնակարանից, երբ ետեից լսեց մի թոյլ հառաչանք։

Մի վայրկեան կանգ առաւ, վախեցած նայեց շուրջն ու էլի վազելով առաջ գնաց։

Հասաւ հացթուխի խանութին. փակ էր։ Առանց երկար մտածելու՝ շարունակեց գնալ։

Քառորդ ժամ հազիւ էր անցել, որ նորից նոյն արագ քայլերով վերադառնում էր տուն՝ ձեռքին հաց, պանիր և մի հատ էլ ձմերուկ։

Անտարբեր անցնում էր դիակների մօտից, հասաւ այն տեղին, որտեղ գնալիս լսել էր վիրաւորի հառաչանքը, բոլորովին մոռացել էր

նրան։

—Է՜յ... մխ... օգնի՛ր... Մեռնում եմ, արիւնաքամ եմ լինում. վայրկենապէս կանգ առաւ և նայեց քարերի մէջ ընկած մարդուն, որ թաւալում էր արիւնի մէջ։ Նրան թւաց թէ ծանօթ դէմք էր. բայց ինչ անել։ Եւ չկարողանալով իրան հաշիւ տալ՝ մեքենաբար մի կտոր հաց կտրեց ու ձգեց նրա առաջը և շտապեց հեռանալ...

Ետևից դեռ լսում էին արիւնաքամ լինող վիրաւորի հառաչանքները։ Կարծես լսեց նոյն իսկ իր անունը։ Բայց կանգ չառաւ ու շտապեց տուն։ Ուղեղը դադարել էր գործելուց, խիղճը քնել...

Տուն հասած՝ բաց արաւ դուռը։ Բոլորն էլ նոյն դրութեան մէջ էին։ Վախեցած նրանք բարձրացրին գլուխները, տեսնելով հօր ձեռքին հաց, ձմերուկ, առաջին հայեացքից նրանք կարծես չըհասկացան թէ ինչ է բերել հայրը. աչքերը չըռած նայում էին ձմերուկին։

—Եկէք... կերէք... հաց, պանիր, ձմերուկ էլ եմ բերել...

«Հաց» խօսքը կարծես ցնցեց մանուկներին։ Խոր քնից արթնացածի պէս ճչացին ու սողալով մօտ եկան։

—Հա՜ց... հա՜ց .. գոռալով կրկնում էին նրանք։

Մայրն էլ դրեց երեխային գետնի վրայ և մօտեցաւ։ Մի քանի րոպէում լուռ, միմեանց ձեռքից գրեթէ խլելով էր, որ կերան։ Մի փշրանք իսկ չթողին։

—Հաշտուեցին է.. խօսեց հայրը կիսաժպիտ, կարծես ինքն էլ չհասկանալով իր ասածի իմաստը։

Ոչ որ ոչինչ չպատասխանեց։ Բոլորը լուռ էին, մի ինչ որ-վայրենի բան կար նրանց դէմքի վրայ. երեխաները կարծես չգիտէին թէ կշտացել են. հարցական հայեացքով նայում էին միմեանց և կարծես շուարել էին.—լա՞ն, թէ՞ էլ հարկաւոր չէր։ Ու կամաց-կամաց թմրած, թուլացած՝ ընկան միմեանց վրայ։

Հայրը բարձրացաւ, մի քանի քայլ արաւ սենեակում ու ինքն էլ պառկեց։

Քառորդ ժամ դեռ չէր անցել, որ յանկարծ սարսափած վեր ցատկեց տեղից։ Կարծես մէկը ամուր ցնցեց նրան։ Ականջին պարզ լսելի եգաւ.—«Հարիւ՜ն, օգնիր»։

Նայեց շուրջը, ոչ ոք չկար. կինը, երեխաները քնած էին։ Դողալով մօտ գնաց կնոջը, կամաց մի քանի անգամ շարժեց, ձայն տուեց։

—Ի՞նչ կայ... գոչեց կինը վեր թռնելով։

—Ոչինչ... ոչինչ... հանդստացիր...

—Ի՞նչ է պատահել։

—Փողոցում այնքան դիակներ կան թափված... Երբ տուն էի գալիս, մէկն ինձ ձայն տուեց... Կարծեմ մեր հարևան Սեդրակն էր. շորս կողմը արիւն էր թափված... ես մի կտոր հաց տուի նրան...

—Ի՞նչ Սեդրակ, վախեցած հարցրեց կինը։

—Հարևան Հերիբնազի տղան. կարծեմ նա էր։

—Վիրաւորուած էր...

—Այո... գնամ, մօտ է, շատ մօտ... Գնամ տուն բերեմ, գուցէ բաղցած է, ծարաւ...

—Քոռանա՛յ բո մէրը, Սեդրակ... Կգժուի խեղճ կինը, միտուճար է, տուն չտանես։

—Մարդը այլեւս չլսեց նրան, արագ դուրս վազեց, հասաւ այն տեղին, որտեղ լսել էր վիրաւորուածի ձայնը։ Սակայն ոչ ոք չկար այլեւս։

Սկսեց փնտրել նոր շինուող տան բարերի մէջ. յիշում էր, որ այդտեղ էր, այդ բարերի մէջ էր պառկած նա։

—Սեդրա՛կ... Սեդրա՛կ, մի բանի անգամ կանչեց։

Բայց ոչ ոք չպատասխանեց։

Յանկարծ սարսափած կանգ առաւ։

Սեդրակն ընկած էր գունատ. արիւնը լճացել էր շորս կողմը. արեան այդ լճի մէջ ընկած էր արիւնաթաթախ մի կտոր հաց, որ, նա ձգել էր նրան։

Մի սոսկալի ճիչ դուրս թռաւ կրծքից. երկու բռունցքով ամուր խփեց գլխին ու ճչաց...

—Ի՞նչ պատասխան տամ բո մօրը, ինչ ասեմ ես նորան։ Ասեմ-տեսայ, գեռ կենդանի էր, կանչեց օգնութեան, բայց ես չօգնեցի... Քաղցած էի... Քաղցը կուրացրել էր ինձ... Ի՞նչ ասեմ... Ի՞նչ պատասխան տամ բո թշուառ մօրը։

Ու երկար նստած բարերի վրայ անշնչացած Սեդրակի մօտ, չգիտէր ինչ անել. թողնել այստեղ չէր կարելի, իրանց մօտ տանել, երեխայրը կը վախենային, մեր մօտ—մայրը կը խելագարուէր իր միտուճարի դիակը տեսնելիս։

Այդ մտածմունքի մէջ խորասուզուած, կամաց-կամաց դադարել էր արդէն մտածելուց. նրան թուում էր, թէ երազ է, սարսափելի, ճնշող մի կոշմար։ Բաւական էր բանալ աչքերը և ամեն ինչ կանցնէր...

Յանկարծ նրա ականջին հասան մարդկանց ձայներ և անիւների գլրգոց։

Բարձրացրեց գլուխը. փոքր հեռու կանգնել էր

մի սայլ ինչ օր տարօրինակ բեռնով, ծածկոցի տակից երևում էին միմեանց վրայ թափթփված ձեռներ, ոտներ, գլուխներ...

Մի բանի հոգի, զինարների հետ, մօտեցան նրան. Սեղրակի տարերից բռնած քաշեցին բարերի միջից ու ձգեցին սայլի վրայ մեռոների հետ։

Ուզեց մի բան ասել. բայց ձայնը խեղդուեց կոկորդում։

Սայլը շարժուեց, մարդիկ էլ եռեւից։

Ուզեց վազել նրանց եռեից, չմոռնել որ տանեն, ասել որ նրա տունը մօտ է, իր հարեւանն է, ինքը կոտանի, մայր ունի ծեր, անօգնական, հիւանդ... Բայց մի բանի բայլ արաւ գէպի զնացողներն ու սայլը, ձեռքով օդի մէջ շարժում արաւ, կարծես մի բան ուզեց ասել, չկարողացաւ, անբնական ճիչ արձակեց և ուշաթափ ընկաւ բարերի մէջ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. Մեսրոպի անվան
7/31 1922
Գանձարան

ԴԱԳԱՂՆԵՐ

Ամեն օր տուն գնալուց գեռ հեռից աչքիս է ընկնում խանութի ցուցանակը։ Ես պարզ կարդում եմ «Դագաղներ»։ Դագաղներ... Կարծես մեխուում է այդ բառը ուղեղիս մէջ, և ոչ մի ոյժ չի կարող դուրս շպրտել նրան այդտեղից։ Մօտենում եմ խանութին—Դագաղներ՝ մեծ, փոքր, շրեղ, անշուք...

Որքան սիրուն դագաղներ կան, հասարակներն էլ կան՝ անշուք, ներկած տախտակներից։

Ես աշխատում եմ շուտով անցնել, այդ դագաղների խանութը չնայել, բայց ակամայ կանգ եմ առնում... Մեծ, փոքր, շրեղ, անշուք...

Դագաղների մէջ կանգնած է նա դժգոյն հիւանդ, ուրուականի պէս մռայլ։ Ուզում եմ փախչել բայց անշարժ կանգնած եմ ու մի բայլ անգամ չեմ կարողանում առաջ գնալ։ Լուռ անթարթ նայում եմ դագաղներին, աղջկանը, նա

էլ դադարում է քայլելուց, նայում է ինձ...— Փախչենք, փախչենք այս զզվելի դագաղներից... Փախչենք, ես սիրում եմ քեզ... Ինձ թւաց թէ դագաղները հասկացան իմ միտքը, նրանք շարժւեցին իրանց տեղերից, ժպտացին ու աչքով արին մէկ մէկու. աղջիկն էլ ժպտաց.— Ես հազիւ էի շնչում...

Դագաղներ... դագաղներ... Ինչու են ի ցոյց դրել, ինչու չեն թաքցնում, ինչու է այդ դժգոյն հիւանդ աղջիկը ուրուականի պէս քայլում դրանց մէջ... Դագաղ։ Ինձ սարսափեցնում է ամենամեծը, ամենաշքեղը, պէտք է սղմուել այդ տախտակների մէջ, անշարժ պառկել, չզգալ, չըմտածել, դագաղի պէս անզգայ դառնալ... Ես չեմ վախենում մահից, բայց որքան սարսափ, անյայտութիւն կայ նրա մէջ. «դագաղ», դրա մէջ են դնում մարդկանց յոյսերով, ձգտումներով, սէր, վիշտ, բոլորը դնում են դագաղում, դագաղըն էլ թաղում են հողի տակ, մենակ թողնում, գնում։ Իսկ գերեզմանը տխուր է, նեղ, մութ, խոնաւ։

Այդ սիրուն աղջկանն էլ դնելու են դագաղում...

Նայեցի խանութի ներսը. աղջիկը կանգնած էր պատուհանի մօտ. ժպիտը շրթունքներին ինձ

էր նայում... Դագաղները անշարժ են, մեր աչքերը հանդիպում են. նա էլի սկսում է ետ ու առաջ գնալ...

Ինչու այդ սիրուն աղջիկը ծաղիկ չէ ծախում, այլ դագաղ... դագաղ, ծաղիկ. ինչու անպատճառ ծաղիկ և ոչ մի ուրիշ բան, թէկուզ միս... միս... հա, կանայք միս չեն ծախում... Նա քայլում է, սպասումէր կը գան դագաղ պատուիրելու... Նա ժպտալով կասէ—թանկ չէ պարոն, շատ գեղեցիկ դագաղ կը լինի...— Արդեօք ինչ է մտածում նա... Գիտէ՞, որ իրան էլ են դնելու դագաղի մէջ...

Ես ուժով խլւում եմ այդ տեղից և սկսում եմ վազել...

Մտնում եմ սենեակս, սենեակս էլ է ցուրտ, գերեզմանի պէս. դագաղները չեն հեռանում աչքիցս, շրջապատում են ինձ, սկսում են պարել, թռչկոտել, լուռ, անձայն... Ի՞նչ վայրենի պար է... մեծ, փոքր, շքեղ. անշուք... դագաղ ծախող աղջիկն էլ պար է բռնում նրանց հետ... Բոլորը թռչկոտում, բոլորը պարում են։

Սարսափած վեր եմ թռչում տեղիցս, վազում սենեակի մի անկիւնից միւսը, ինձ թւում է թէ խելագարւում եմ... Դողում եմ, ցուրտ է, բերանըս չորանում է, սիրտս բարձր անկանոն բաբա-

խում այնքան բարձր, որ ինձ թւում է թէ միւս սենեակում լսում է նրա զարկը. անդիտակցաբար մօտենում եմ ջրի շշին, լցնում բաժակը։ Ձեռներս դողում են...

Օդ, օդ, սենեակում օդ չկայ... բայց եմ առնում պատուհանը օդ, օդ...

ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

ՊԱՏԿԵՐ

Ուլմ մահճակալ կար, որոնը, բայի մէկից, բոլորն էլ բռնուած էին։ Գիշերուայ երերից անց էր, բայց հիւանդներից ոչ որ դեռ քնած չէր։ Մէկը ծածկել էր գլուխը վերմակի տակ և աշխատում էր քնել։ Բայց հիւանդներից մէկի նըւոցը, որ անընդհատ, առանց դադար առնելու, լսում էր մուլմ անկիւնից, նրան չէր թոյլատում քնելու։ Սենեակում կիսախաւար էր. լամպը աղօտ լուսաւորում էր շուրջը՝ անկիւնները թողնելով մթութեան մէջ։ Բոլորի դէմքին էլ զայրոյթ էր նկատւում. բոլորն էլ զայրացած՝ դըժգոհ նայում էին դէպի մուլմ անկիւնը, որտեղից լսում էր հիւանդի միալար ծանր նըւոցը։

—Գոնէ լոյսը բարձրացրէք,—լսեց մահճակալների մէկի վրայից մի ձայն. բայց ոչ որ

շշարժուեց տեղից։ Նա ինքը արագ վեր թռաւ, մօտեցաւ լապտերին, ուժով պտտոյտ տուաւ պատրոյգը, այնպէս որ նա սկսեց մխալ։

—Ցածացրու, ծուխ է անում,—կանչեցին ամեն կողմից։

Նա մի քիչ ցածացրեց, կրկին մօտեցաւ իր մահճակալին, երկու մատերով ամուր փակեց ականջները և ընկաւ նրա վրայ։

Բոլորը լուռ էին. միմիայն հիւանդի տնքոցն էր, որ մերթ ուժեղ, մերթ նուաղ, բայց անընդհատ, լսւում էր անկիւնից։

—Թո՛ւ... կարելի է խելագարուել,—լալկան ձայնով ասաց մէկը, թաղելով գլուխը բարձի մէջ։

Յանկարծ բոլորովին անսպասելի կերպով հիւանդի ձայնը մեղմացաւ, մի քիչ յետոյ բոլորովին լռեց։ Մի րոպէ բոլորը լուռ մնացած իրանց տեղերում, լսողութիւնները լարած սպասում էին. կարծես վախենում էին շարժուել, ձայն հանել...

—Քնե՞ց... հազիւ լսելի շշնջաց մէկը։

—Քնե՞ց... կրկնեց միւսը։

—Ս... ս... ս... կամաց...

—Բոլորը լուռ մօտեցան իրանց մահճակալներին և զգուշութեամբ պառկեցին։

—Բժշկին վաղը պէտք է ասել, որ տանեն

դրան այստեղից. երկու գիշեր է հանգիստ չի տալիս. մենք էլ հիւանդ մարդիկ ենք. եթէ առողջ լինէինք, ախր հիւանդանոց էլ չէինք գալ...

Տեսնես փելդշէրը, հերթապահը ո՞ւր են կորել։

—Չե՞ս իմանում, մրափել են։

—Դէ՛հ, դուք էլ սուս արէք, թողէք մի քիչ աչքներս փակեմ։

—Է՜յ... հը... ա՜յ... խեղդուող ձայնով կանչեց նորից հիւանդը։

—Դէ՜... քնիր, տեսնեմ, ինչպէս ես քնում.

Հիւանդը առաջուանից էլ աւելի ուժեղ կերպով սկսեց նուալ, ապա սկսեց զառանցել։

—Խելագարուե՜լ, խելագարուե՜լ կարելի է,— բարկացած գոռաց նրա հարեւանը, տեղից վեր ցատկելով...—ո՞ւր է փելդշէրը, հերթապահը... մրափե՜լ են շան-որդիքը... ո՞ւր են կորել...

Լռե՛ր... լռե՛ր... հիւանդի մօտ վազելով գոռում էր նա՝ կռճտացնելով ատամները։

Հիւանդը կարծես չլսեց նրան։

—Դու սուտ ես, ոչ մի տեղդ չի ցաւում, ձայնդ կտրիր, մի րոպէ հանգիստ տուր, բաւական է շան նման ոռնաս, բաւակա՜ն է, բաւակա՜ն,— ներվային կերպով գոռում էր նա փետելով մազերը։

—Ի՞նչ ես ուզում, ինչդ է ցաւում,—մօտենալով հիւանդի մահճակալին ու թեքւելով նրա վրայ հարցեց մէկը։—Ջուր.. ջուր կուզեմ։

Մի սարսափելի հառաչանք դուրս եկաւ հիւանդի կրծքից, նա ձեռներով օդի մէջ մի շարժում արաւ։

—Մեռնում է՛,—վճռեց մէկը՝ անտարբեր նայելով հարևանին։

—Ի՞նչ մեռնող պտուղ է, երկրորդ օրն է էզպէս նում է. սա հօ հիւանդանոց չէ, դժոխք է, դժոխք, սաղ մարդուն կը սպանեն։

—Փեղչէ՛րը... փեղչէրը, անբնական ձայնով ճչաց նորից նրա հարևանը, վազվզելով սենեակում. ո՞ւր է, ո՞ր ջահնդամն է կորել... Էյ, ո՞վ կայ... տարէք նրան... կորցրէք...

Ոչ ոք նրան չպատասխանեց։

—Լսի՛ր, մարդ... մի քիչ համբերիր, դիմացի՛ր տղամարդ չե՞ս, ախր մենք էլ ենք հիւանդ. այստեղ հօ մենակ դու չես, խղճա՛, մի քի՛չ խիղճ ունեցի՛ր,—հանգիստ ձայնով մրմնջում էր մէկը հիւանդի ականջին։

Բայց նա ուշադրութիւն չդարձնելով ոչ ոքի վրայ կարծես իրա հետ չլինէին, շարունակում էր իր վայվայոցը։

—Արդէն լուսանում է,—յուսահատ ձայնով

ասաց մէկը, մօտենալով պատուհանին։

—Լուսանում է... անբնական ձայնով գռաց մութ անկիւնից նրա հարևանը։ Լուսանում է, հա՛... հա՛... հա՛... անիծեալ... գլուխս, գէհ, բաւական է. ձայնդ կտրի՛ր, կտրիր... կտրիր... կըխեղդեմ, շան ծնունդ, ճչաց ու յարձակւեց հիւանդի վրայ։

—Գի՛ժ ես, ինչ է,—ետ մղելով ասաց հիւանդի գլխավերևը կանգնած մի ալեխառն մազերով մարդ։

—Լռի՛ր... լռիր,—շարունակում էր ճչալ հիւանդի հարևանը։

Հիւանդը թոյլ հառաչեց, մի բան խլրտաց կոկորդում, բերանը երեք անգամ բաց ու խուփ արաւ ու լռեց։

Մի րոպէ բոլորը լուռ էին. կողքին կանգնած մարդը մի քանի քայլ ետ գնաց։

—Քնեց... ընդհատեց մէկը շշուկով լռութիւնը։

—Չգիտեմ... կարծեմ։

Նորից մի քանի րոպէ հիւանդը լուռ էր. ոչ մի ձայն։

—Վերջացաւ... վերջացաւ, մի քանի անգամ կրկնեց մէկը ընկնելով մահճակալի վրայ։

Բոլորը զգուշութեամբ մօտեցան իրանց մահ-

ճակատներին բացի նրա հարևանից, որ անհան-
գիստ անց ու դարձ էր անում։

—Պառկիր... պառկիր... կզարթեցնես, էլի
կսկսի զանդյա տանել։

Մի քիչ անց բոլորը քնած էին, բացի նրա
հարևանից, որ անհանգիստ թաւալւում էր անկող-
նում, աշխատում էր ուժով փակել յոգնած թու-
լացած աչքերը, բայց նրանք իրանք իրանք բաց-
ւում էին։

Արդէն լուսանում էր, բայց նա դեռ չէր քնել
և չէր կարողանում։ Ներվային շարժումով նըս-
տեց տեղը, մի վախկոտ հայեացք ձգեց հարևա-
նի վրայ և իսկոյն փակեց աչքերը...

—Ինչու լաց...—անցաւ նրա մտքով։ Ուզեց
վեր կենալ, նայել նրա վրայ մօտիկից, ուզեց գը-
նալ ներողութիւն խնդրել, որ գոռացել է նրա
վրայ, հայհոյել, բայց վեր չկացաւ, շուռ տուեց
դէմքը դէպի պատուհանը... Քնեց... քնեց,—
անգիտակցաբար կրկնում էր նա մտքում,—ինչ
անսպասելի և յանկարծ քնեց... բայց գուցէ քը-
նած չէ՞... հապա ինչու է լաց... Լաց է։ Նա
սկսեց ականջ դնել։ Սենեակի զանազան կողմե-
րից լսւում էր քնածների շնչառութեան ձայ-
ները. մօտ, շատ մօտ լսւում էր տկտկոց. դա ի-
րա սիրտն էր։ Իսկ նա չէր շնչում... չէ՞... կար-

ծես շնչում է... կուրծքը բարձրացաւ. նա մի շար-
ժում արաւ, ուզեց կանգնել, բայց նորից կուչ և
կաւ գլուխը կախ ձգեց ու փակեց աչքերը։

Մի քանի րոպէ անցաւ, սենեակում արդէն
լոյս էր, բայց նա վախենում էր, բարձրացնել գը-
լուխը բանալ աչքերը։ Յանկարծ մէկը կարծես նը-
րան ուժեղ կերպով ցնցեց. նա սարսափած նայեց
շուրջը, տեսաւ իր հարևանին։ Հարևանը անշարժ
պառկած էր բերանը աչքերը կիսաբաց։

—Մեռե՞լ է,—անբնական ձայնով ճչաց նա
և վեր ցատկեց տեղից, վազեց դէպի քնած հա-
րևանը—էյ... էյ... մեռա՞ւ... Մեռել է... վեր
կաց... վեր կացէք... շուտ... էյ, դու էլ վեր
կաց... չէ՞ք լսում, մ[...] է, աւելի բարձր ու
մի քանի անգամ կրկն[...] նա. բայց հիւանդներից
ոչ որ չշարժուեց. մէկը երազում հառաչեց հա-
րևան սենեակում ժամացոյցը հինգ անգամ խփեց։
Նա վազեց դէպի պատուհանը, արագ բացեց,
դուրս հանեց գլուխը։ —Մեռաւ կանչեց նա։

Մի քիչ անց ներս մ[...] ու քնաթաթախ ֆելդշէրը։

—Մեռաւ... [...]աջ վազելով և բռնելով
նրա ձեռքը շշնջ[...] նա։

—Ո՞վ,—սառը [...]ով հարցրեց ֆելդշէրը։

Նա լուռ մատով [...]ց տուեց անկիւնը։

—Վաղուց ժամ[...]կ էր։

ՄՈՒԹԷ

Մութ է. դաժան խաւար. ոչ մի ձայն. ոչ մի շշուկ. մեռելային լռութիւն է տիրում շորս կողմը։ Դադարել են գնդակների վժվոցը, թնդանօթների բոմբիւնը, վիրաւորների հառաչանքը, մեռնողների վերջին ճիչը. ամեն ինչ լռել էր, լռել ու ծածկուել թանձր խաւարով։

Ցանկարծ այդ ամայի տարածութեան միջից լսուեց մի երկարատև ու խուլ հառաչանք, ու իսկոյն նորից տիրեց լռութիւն, ծանր ու ճնշող։

Արիւնը կաթիլ-կաթիլ ծորում էր նրա վերքից, խոր ու փոքրիկ վերքից. շրթունքները կիսաբաց էին, կուրծքը ծանր ցածանում էր ու բարձրանում։

Ցանկարծ նրան թուաց թէ թռչում է վերվեր. նա տեսնում էր արշալոյսը, արեը ծագում է, բնութիւնը ժպտում։ Իսկ ինքը սլանում է լեռների ծովերի վրայով. հեռու, հեռու... Նրա լսողութեանը հասնում են ցնծութեան աղաղակներ։ Ահա և իրանց տունը և իրայինները՝ ծանօթ դէմքեր, ծանօթ տեղեր. և սիրտը հրճուանքից բիչ է մնում պայթի։ —Մայրիկ... մայրիկ,—կանչում է նա վերեից ու իջնում է ցած...

Ուրախութիւնից բոյրերը հեկեկում են, մայրը ընկնում է նրա գիրկն ու նուաղում։ Հաւաքում են հարևանները, բոլորը ժպտուն, բոլորը ուրախ։ Մայրը ուշքի է գալիս. սղմում նրա գլուխը իր կարօտած կրծքին, շոյում է դէմքը, փոքրիկ միրուքը, մազերը. յանկարծ նրա ձեռքը կրպչում է լերդացած արեան։

—Վիրաւորուածես, սարսափած ճչում է նա։

—Արիւն... արիւն... ճչում են բոյրերը։

Ընջատատում են նորան, կապում վէրքը...

—Ի՞նչ լաւ է... թեթև, անդորր...

Եւ նրան թուաց թէ նորից դէպի վեր է բարձրանում։

Ցածում մարդիկ կամաց-կամաց փոքրանում են հազիւ լսելի է նրանց անորոշ աղմուկը, իսկ այդ անորոշ աղմուկի միջից մօր ձայնը... որոշ, շատ որոշ։

—Ո՞ւր ես թողնում մեզ։

—Գամ. գամ, նորից գամ.—ուզում է ա-

սի ինքը, բայց շրթունքները չեն շարժւում։

Ու սլանում է նա արագ դէպի վեր, վեր...

Սրինգը գանգատ հոսում է վէրքից։ Գլուխը թոյլ ընկել է կրծքին, որ այլևս չի շարժւում։ Իսկ արեան մի կաթիլ դեռ չի կարդացած, դողում էր վէրքի գլխին...

Սրնգը գանգատ բարձրանում էր լեռների ետևից. Նայեց ցած, տեսաւ ու ժպտաց. մեղմ զեփիւռը շոյեց նրա գլուխն ու անցաւ, իսկ խոտերը մեղմիւ ինչ որ փչփչում էին իրար նրա ականջի տակ։ Եւ նա անշունչ ընկած էր արիւնաքամ։

Աղաւնի իջաւ նրա մօտ նրա արիւնով ներկւած մի քարի վրայ, կռռաց, մի ոստիւնով աւելի մօտ եկաւ, նայեց նրա կրծքին, նորից կռռաց, խրեց կտուցը վէրքի մէջ, թափ տուեց սև գլուխն ու կռռաց։

Չորս կողմը լուռ էր. այս ու այն կողմ թափթփւած էին դիակները, դիակները...

Երբեմն միայն լսւում էր ագռաւների կռռոցը։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թագուհի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց
Էջմ.-Վաղարշ. (Օրիորդաց)

ՀՀ Ազգային գրադարան
NL0355299

92035

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.